ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2012 թվական N 11

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Թափոնների մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով ավագանին

որոշում է՝

Կենցաղային աղբի աղբահանությունը իրականացնել համապատասխան սահմանված վայրում, ֆիզիկական անձի միջոցով համայնքի բյուջեի հաշվին:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

N 11 Որոշումն ընդունված է

Ավագանու անդամներ՝ Ա. Միրոյան կողմ

Հ. Հակոբյանը կողմ

Յ. Մովսիսյանը կողմ

Ա. Նազարյանը կողմ

Ս. Շահբազյանը կողմ

Հ. Շահբազյանը կողմ

Բ. Ամիրխանյանը կողմ

ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Յ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Կատյա Գիշյան

2012թ.դեկտեմբերի 21
գ. Դեղձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2012 թվական N 12

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>ՀՀ օրենքի 10-րդ 11-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով ավագանին

Որոշում է՝

Դեղձուտ համայնքի վարչական տարածքում 2013թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա- շինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի,շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

Հիմնական օբեկների համար՝

1/ մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբեկտների համար -10 000դրամ

2/ սույն կետի <<1.1>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500քմ մակերես ունեցող օբյեկտների համար -20 000դրամ

բ. 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 30 000դրամ

գ. 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -50 000դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկների համար -3 000դրամ

4/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -5 000դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշի նական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերականգնման, արդիականացման աշխա- տանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետա- շինարարական նախագծով՝

-չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա/ հետևանքով օբեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն - 3 000դրամ

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինա կան այլ օբեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է - 2000դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- 5 000դրամ

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանճյուր եռամսյակի համար՝
-5 000դրամ

5. Համայնքի տարածքում բացօդյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար - 350դրամ

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1/ առևտրի օբյեկտների համար - 25 000դրամ

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար - 50 000դրամ

3/ բաղնիքների /սաունաների/ համար - 200 000դրամ

4/ խաղատների կազմակերպման համար - 500 000դրամ

5/ շահումով խաղերի կազմակերպման համար - 250 000դրամ

6/ վիճակախաղերի կազմակերպման համար - 100 000դրամ

7. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 1 000դրամ

Տեղական վճարներ

8. Համայնքի տարածքում շինարարություն կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար - 1 000դրամ

9.Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողեր հատկացնելու ,հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար - 1000դրամ

10.Գյուղապետարանի կողմից մրցույթներ, աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսե- րի փոխհատուցման համար մասնակիցներից գանձվում է փոխհատուցման վճար - 1000 դրամ

Որոշման 1; 2; 3 ենթակետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,5 գոր - ծակից:

Կողմ-7 Դեմ-0 Չեռնպահ-0

N 12 Որոշումն ընդունված

Ավագանու անդամներ Ա. Միրոյան կողմ

Հ. Հակոբյանը կողմ

Յ. Մովսիսյանը կողմ

Ա. Նազարյանը կողմ

Ս. Շահբազյանը կողմ

Հ. Շահբազյանը կողմ

Բ. Ամիրխանյանը կողմ

ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Յ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Կատյա Գիշյանը

2012թ.դեկտեմբերի 21
գ. Դեղձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
21 դեկտեմբերի 2012 թվական N 13

3.<< ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>_ ՀԱՐՑԸ: *Ղեկավարվելով „Համայնքային ծառայության մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի և „Իրավական ակտերի մասին„Հայաստանի Հանրապետության 72-րդ հոդվածի պահանջներով ավագանին* *Որոշում է՝ Դեղձուտ համայնքի „Համայնքային Ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի„ նոր կազմը ձևավորելու նպատակով որպես հանձնաժողովի անդամ առաջադրել Յուրիկ Մովսիսյանի թեկնածությունը:*

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

N 13 Որոշումն ընդունված է

Ավագանու անդամներ՝

Ա. Միրոյանը	կողմ	
Հ. Հակոբյանը	կողմ	
Յ. Մովսիսյանը	կողմ	
Ա. Նազարյանը	կողմ	
Ս. Շահբազյանը	կողմ	
Հ. Շահբազյանը	կողմ	
Բ. Ամիրխանյանը	կողմ	

ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Յ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Կատյա Գիշյան

2012թ.դեկտեմբերի 21
գ. Դեղձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2012 թվական N 14

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ „ ՋՕԸ„-Ի ԱՐՏԱՇԱՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ „ՓԲԸ„ _Ի ՀԵՏ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով „Տեղական ինքնակառավարման մասին„Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով համայնքի ավագանին որոշում է՝

1.Դեղձուտի համայքային սեփականություն հանդիսացող ոռոգման ջրի ներտնտեսային ցանցի նկատմամբ իրականացնել գույքային իրավունքի պետական գրացում և „Անշարժ գույքի անհատույց օգտագործման„ պայմանագրով հանձնել „ՋՕԸ„-ի Արտաշատի մասնաճյուղի Փակ բաժնետիրական ընկերությանը:

2.Դեղձուտ համայնքի ղեկավար պարոն Յ. Մուրադյանին սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան սպասարկման գրասենյակում„ՋՕԸ„ ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի հետ կնքել նշված պայմանագիրը կամ դրանց կնքման գործարքն իրականացնելու համար լիազորել իրացասու անձի:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

N 14Որոշումն ընդունված է

Ավագանու անդամներ՝	Ա. Միրոյանը	կողմ
	Հ. Հակոբյանը	կողմ
	Յ. Մովսիսյանը	կողմ
	Ա. Նազարյանը	կողմ
	Ս. Շահբազյանը	կողմ
	Հ. Շահբազյանը	կողմ
	Բ. Ամիրխանյանը	կողմ

ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Յ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Կատյա Գիշյան

գ. Դեղձուտ, 2012թ.դեկտեմբերի 21